

Խորհրդի 2003 թվականի հունվարի 27-ի թիվ 2003/8/ԵՀ հրահանգ՝ ուղղված միջսահմանային վեճերի ժամանակ արդարադատության մատչելիության բարելավմանը՝ նման վեճերի դեպքում անվճար իրավաբանական օգնության տրամադրման նվազագույն ընդհանուր կանոններ հաստատելու միջոցով

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը, և մասնավորապես, դրա հոդված 61(գ)–ն և 67-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

Քանի որ

1) Եվրոպական միությունը նպատակ է հետապնդում պահպանել և զարգացնել ազատության, անվտանգության և արդարադատության տարածք, որտեղ երաշխավորված է մարդկանց ազատ տեղաշարժը: Աստիճանաբար նման տարածք ստեղծելու համար Համայնքը պետք է, այլ ակտերի հետ մեկտեղ, ընդունի միջսահմանային նշանակություն ունեցող և ներքին շուկայի պատշաճ գործունեության համար անհրաժեշտ քաղաքացիական գործերով դատական համագործակցության վերաբերյալ իրավական ակտեր,

2) Համաձայն սույն Պայմանագրի հոդված 65(գ)–ի՝ այդ ակտերը պետք է ներառեն քաղաքացիական դատավարության պատշաճ ընթացքի խոչընդոտների վերացմանն ուղղված ակտեր՝ անհրաժեշտության դեպքում քաղաքացիական դատավարության վերաբերյալ անդամ պետություններում կիրառվող կանոնների համատեղելիությունը խթանելու միջոցով,

3) 1999 թվականի հոկտեմբերի 15–ին և 16–ին Տամպերեում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպմանը Խորհրդին կոչ արվեց սահմանել նվազագույն չափանիշներ, որոնք Միության ողջ տարածքում կապահովեն միջսահմանային գործերով բավարար մակարդակի անվճար իրավաբանական օգնություն,

4) բոլոր անդամ պետությունները 1950 թվականի նոյեմբերի 4-ի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի պայմանավորվող կողմեր են: Սույն Հրահանգում նշված հարցերը պետք է դիտարկվեն այդ կոնվենցիային համապատասխան և, մասնավորապես, վեճի մասնակից երկու կողմերի հավասարության սկզբունքը հարգելու հիման վրա,

5) սույն Հրահանգը նպատակ ունի խթանել անվճար իրավաբանական օգնության կիրառումը միջսահմանային վեճերում այն անձանց համար, որոնք չունեն բավարար միջոցներ, և երբ օգնությունն անհրաժեշտ է արդարադատության արդյունավետ մատչելիությունն ապահովելու համար: Համընդհանուր ճանաչում ստացած արդարադատության մատչելիության իրավունքը նաև վերահաստատվել է Եվրոպական միության Հիմնարար իրավունքների խարտիայի 47-րդ հոդվածով,

6) ո՛չ դատավարության կողմի միջոցների բացակայությունը, անկախ այն բանից՝ նա հանդես է գալիս որպես հայցվոր թե պատասխանող, ո՛չ այն դժվարությունները, որոնք բխում են վեճի միջսահմանային բնույթից, չեն կարող խոչընդոտել արդարադատության արդյունավետ մատչելիությունը,

7) քանի որ անդամ պետություններն առանձին գործելով չեն կարող բավարար չափով հասնել սույն Հրահանգի նպատակներին, և դրանք կարելի է ավելի լավ իրականացնել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ձեռնարկել լրացուցչության սկզբունքի համաձայն՝ ինչպես սահմանված է Պայմանագրի 5-րդ հոդվածով: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակներին հասնելու համար,

8) սույն Հրահանգի հիմնական նպատակը միջսահմանային վեճերում անվճար իրավաբանական օգնության համապատասխան մակարդակ երաշխավորելն է՝ որոշակի նվազագույն չափորոշիչներ սահմանելու միջոցով, որոնք վերաբերում են նման վեճերի դեպքում իրավաբանական օգնությանը: Խորհրդի հրահանգը այդ նպատակի համար ամենահամապատասխան օրենսդրական փաստաթուղթն է,

9) սույն Հրահանգը կիրառվում է քաղաքացիական և առևտրային գործերով միջսահմանային վեճերի դեպքում,

10) բոլոր այն անձինք, որոնք սույն Հրահանգի շրջանակներում ներգրավված են քաղաքացիական և առևտրային վեճերում, պետք է կարողանան իրենց իրավունքների պաշտպանությամբ հանդես գալ դատարանում, եթե նույնիսկ նրանց անձնական ֆինանսական դրությունը իրենց համար անհնարին է դարձնում հոգալու դատական ծախսերը: Անվճար իրավաբանական օգնությունը համարվում է պատշաճ, երբ այն հասցեատիրոջը տրամադրում է արդարադատության արդյունավետ մատչելիություն՝ սույն Հրահանգի պայմանների համաձայն,

11) անվճար իրավաբանական օգնությունը ներառում է մինչդատական խորհրդատվությունը՝ նպատակ հետապնդելով հաշտության գալու մինչև դատական վարույթ սկսելը, իրավաբանական օժանդակություն՝ գործը դատարան ներկայացնելիս և ներկայացուցչություն դատարանում, ինչպես նաև օժանդակություն՝ դատական ծախսերի կամ դրանցից ազատելու հետ կապված հարցերում,

12) այն հարցը, թե արդյոք դատական ծախսերը, որոնք դրվում են անվճար իրավաբանական օգնություն ստացողի վրա, կարող են ներառել հակառակ կողմի

ծախսերը, պետք է վերապահվի այն անդամ պետության իրավունքին, որտեղ գտնվում է դատարանը կամ որտեղ վճռի կատարման պահանջ է ներկայացվել,

13) Միության բոլոր քաղաքացիները, անկախ այն բանից՝ նրանք մշտապես թե առավելապես են բնակվում անդամ պետությունում, պետք է ունենան միջսահմանային վեճերում անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք, եթե նրանք բավարարում են սույն Հրահանգով սահմանված պահանջները: Նույնը վերաբերում է նաև երրորդ երկրի քաղաքացիներին, որոնք առավելապես և օրինական կարգով բնակվում են անդամ պետությունում,

14) անդամ պետությունները պետք է ազատ լինեն որոշելու այն շեմը, որից բարձր գտնվելու դեպքում անձը կհամարվի դատական ծախսերը հոգալու ունակ՝ սույն Հրահանգում սահմանված պայմաններում: Այդ շեմերը պետք է որոշվեն տարբեր օբյեկտիվ գործոնների լույսի ներքո, ինչպես օրինակ՝ եկամուտը, կապիտալը կամ ընտանեկան դրությունը,

15) այնուամենայնիվ, սույն Հրահանգի նպատակը հնարավոր չէր լինի իրագործել, եթե անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմողները հնարավորություն չունենային ապացուցելու, որ իրենք չեն կարող հոգալ դատական ծախսերը, եթե նույնիսկ իրենց միջոցները գերազանցում են այն շեմը, որը որոշվել է դատարանի գտնվելու վայրի անդամ պետության կողմից: Երբ գնահատում է կատարվում՝ որոշելու, թե արդյոք այս հիմքով պետք է տրամադրվի անվճար իրավաբանական օգնություն, դատարանի գտնվելու վայրի անդամ պետության իրավասու մարմինները կարող են հաշվի առնել, թե արդյոք դիմողը բավարարում է վճարունակության չափանիշները մշտապես կամ առավելապես բնակվելու անդամ պետությունում,

16) դատական վարույթում գտնվող գործում արդարադատության արդյունավետ մատչելիության այլ մեխանիզմների դիմելու հնարավորությունը չի համարվում անվճար իրավաբանական օգնության ձև: Բայց այն կարող է հիմք հանդիսանալ մի կանխավարկածի, որ տվյալ անձը կարող է հոգալ դատական ծախսերը՝ անկախ իր ֆինանսական անբարենպաստ դրությունից,

17) անդամ պետություններին պետք է թույլատրվի մերժել անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումները՝ ակնհայտ չհիմնավորված գործողությունների հիմքով կամ այն հիմքով, որը վերաբերում է գործի էությանը այնքանով, որքանով ապահովվել է մինչդատական խորհրդատվություն և արդարադատության մատչելիություն: Դիմումի էության մասին որոշում ընդունելիս անդամ պետությունները կարող են մերժել անվճար իրավաբանական օգնություն ստանալու այն դիմումները, որոնց դեպքում դիմողը իր հեղինակությանը հասցված վնասի պահանջ է ներկայացրել, բայց նյութական կամ ֆինանսական ոչ մի վնաս չի կրել, կամ երբ դիմումը վերաբերում է պահանջին, որն ուղղակիորեն բխում է դիմողի մասնագիտական գործունեությունից կամ ինքնազբաղ մասնագիտությունից,

18) անդամ պետությունների իրավական համակարգերի բարդությունները և դրանց միջև տարբերությունները, ինչպես նաև միջսահմանային բնույթի վեճին բնորոշ

ծախսերը չեն կարող խոչընդոտել արդարադատության մատչելիությունը: Անվճար իրավաբանական օգնությունը համապատասխանաբար պետք է ծածկի այն ծախսերը, որոնք ուղղակիորեն վերաբերում են վեճի միջսահմանային բնույթին,

19) անձի ֆիզիկական ներկայությունը դատարանում պարտադիր լինելու հարցը դիտարկելիս անդամ պետության դատարանները պետք է հաշվի առնեն «Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին» Խորհրդի 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 (ԵՇ) կանոնակարգի առաջարկած հնարավորությունների բոլոր առավելությունները,

20) եթե տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն, այն պետք է ներառի ամբողջ դատավարությունը, ներառյալ՝ դատարանի վճռի կատարման հետ կապված ծախսերը. իրավաբանական օգնություն ստացող անձը պետք է շարունակի ստանալ այդ օգնությունը, եթե բողոք է բերվել կամ օգնություն ստացող անձի դեմ, կամ նրա կողմից այնքանով, որքանով շարունակեն պահպանվել ֆինանսական միջոցներին և վեճի էությանը վերաբերող պահանջները,

21) անվճար իրավաբանական օգնությունը պետք է տրամադրվի միևնույն պայմաններով թե՛ սովորական դատավարությունների ընթացքում և թե՛ արտադատական ընթացակարգերի, օրինակ՝ միջնորդության դեպքում, երբ դրանց դիմելը պահանջվում է օրենքով կամ դատարանի կարգադրությամբ,

22) անվճար իրավաբանական օգնություն նաև տրամադրվում է այլ անդամ պետությունում նույնական փաստաթղթեր կատարելու նպատակով՝ սույն Հրահանգում սահմանված պայմանների համաձայն,

23) քանի որ անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է այն անդամ պետության կողմից, որտեղ գտնվում է դատարանը կամ որտեղ վճռի կատարման պահանջ է ներկայացվել, բացառությամբ մինչդատական օգնությանը, եթե անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմողը դատարանի գտնվելու վայրի անդամ պետությունում չի բնակվում մշտապես կամ առավելապես, այդ անդամ պետությունը պետք է կիրառի իր օրենսդրությունը՝ սույն Հրահանգի սկզբունքներին համապատասխան,

24) նպատակահարմար է, որպեսզի անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվի կամ մերժվի այն անդամ պետության իրավասու մարմնի կողմից, որտեղ գտնվում է դատարանը, կամ որտեղ դատարանի վճիռը պետք է կատարվի: Մա վերաբերում է ն՝ այն դեպքին, երբ դատարանը գործը քննում է ըստ էության, և՛ այն դեպքին, երբ այն սկզբում պետք է որոշի իր իրավասության հարցը,

25) քաղաքացիական գործերով դատական համագործակցություն պետք է կազմակերպվի անդամ պետությունների միջև՝ հանրության և մասնագիտական շրջանակների համար նախատեսված տեղեկատվության փոխանակումը խթանելու և անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների փոխանցումը անդամ պետությունների միջև պարզեցնելու և արագացնելու նպատակով,

26) սույն Հրահանգով սահմանված ծանուցման և փոխանցման մեխանիզմներն ուղղակիորեն բխում են 1977 թվականի հունվարի 27-ին Ստրասբուրգում ստորագրված «Անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների փոխանցման մասին» եվրոպական համաձայնագրի (այսուհետ՝ «1977 թվականի Համաձայնագիր») մեխանիզմներից: Անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների փոխանցման համար սահմանվում է ժամկետ, որը սահմանված չէ 1977 թվականի Համաձայնագրով: Համեմատաբար կարճ ժամկետը նպաստում է արդարադատության անխափան իրականացմանը,

27) սույն Հրահանգի համաձայն փոխանցված տեղեկատվությունը պետք է պաշտպանվի: Քանի որ գործում են «Անհատական տվյալների մշակման ժամանակ անձանց պաշտպանության և նման տվյալների ազատ տեղաշարժի մասին» 1995 թվականի հոկտեմբերի 24-ի Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 95/46/ԵՀ հրահանգը և «Հեռահաղորդակցության ոլորտում անհատական տվյալների մշակմանը և անձնական կյանքի անձեռնմխելիության պաշտպանությանը վերաբերող» 1997 թվականի դեկտեմբերի 15-ի Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 97/66/ԵՀ հրահանգը(6), ապա անհրաժեշտություն չկա տվյալների պաշտպանության մասին հատուկ դրույթներ ներառել սույն Հրահանգում,

28) անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների և անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների փոխանցման օրինակելի ձևերի հաստատումը միջսահմանային դատավարությունների դեպքում կհեշտացնի և կարագացնի ընթացակարգերը,

29) ավելին, դիմումի այս ձևերը, ինչպես նաև դիմումի ազգային ձևերը, պետք է եվրոպական մակարդակով մատչելի լինեն թիվ 2001/470/EC որոշման համաձայն հաստատված Եվրոպական դատական ցանցի տեղեկատվական համակարգի միջոցով (7),

30) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն «Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը սահմանող» 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ հրահանգի համաձայն,

31) անհրաժեշտ է նախատեսել, որպեսզի միջսահմանային վեճերի ժամանակ նվազագույն չափանիշների հաստատումը չխոչընդոտի անդամ պետություններին՝ սահմանելու առավել բարենպաստ պայմաններ ստեղծող դրույթներ անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմողների և նման օգնություն ստացող անձանց համար,

32) 1977 թվականի Համաձայնագիրը և «Անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների փոխանցման մասին» 2001 թվականին Մոսկվայում ստորագրված եվրոպական համաձայնագրի լրացուցիչ արձանագրությունը մնում են կիրառելի անդամ պետությունների և 1977 թվականի Համաձայնագրի կամ արձանագրության կողմ հանդիսացող երրորդ երկրների միջև հարաբերությունների նկատմամբ: Սակայն սույն Հրահանգը գերակայում է 1977 թվականի համաձայնագրի

և արձանագրության դրույթների նկատմամբ՝ անդամ պետությունների միջև հարաբերությունների առումով,

33) Միացյալ Թագավորությունը և Իռլանդիան հայտնել են իրենց ցանկությունը մասնակցելու սույն Հրահանգի ընդունման գործընթացին՝ «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրին և «Եվրոպական միության մասին» պայմանագրին կից ներկայացված «Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դիրքորոշման մասին» արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն,

34) «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրին և «Եվրոպական միության մասին» պայմանագրին կից ներկայացված «Դանիայի դիրքորոշման մասին» արձանագրության 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ Դանիան չի մասնակցում սույն Հրահանգի ընդունման գործընթացին և չի կրում պարտավորություն դրա կամ դրա կիրառման համար:

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 1

Նպատակները և գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգի նպատակն է բարելավել արդարադատության մատչելիությունը միջսահմանային վեճերի ժամանակ՝ նման վեճերի դեպքում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար նվազագույն ընդհանուր կանոններ հաստատելու միջոցով:

2. Սույն Հրահանգը կիրառվում է քաղաքացիական և առևտրային գործերով միջսահմանային վեճերի նկատմամբ՝ անկախ դատարանի կամ տրիբունալի բնույթից: Այն չի տարածվում, մասնավորապես, պետական եկամուտների, մաքսային և վարչական գործերի վրա:

3. Սույն Հրահանգում «անդամ պետություն» արտահայտությունը նշանակում է անդամ պետությունները՝ բացառությամբ Դանիայի:

Հոդված 2

Միջսահմանային վեճերը

1. Սույն Հրահանգի նպատակներով միջսահմանային վեճ է համարվում այն վեճը, երբ սույն Հրահանգի համատեքստում անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմող կողմը մշտապես կամ առավելապես բնակվում է անդամ

պետությունից բացի այլ անդամ պետությունում, որտեղ գտնվում է դատարանը, և որտեղ որոշումը պետք է կատարվի:

2. Անդամ պետությունը, որտեղ մշտապես բնակվում է վեճի կողմը, պետք է որոշվի «Քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների ճանաչման և կատարման մասին» 2000 թվականի դեկտեմբերի 22-ի Խորհրդի թիվ 44/8001 (ԵՀ) կանոնակարգի 59-րդ հոդվածի համաձայն, :

3. Ճիշտ ժամանակը՝ որոշելու համար, թե արդյոք առկա է միջսահմանային վեճ, այն պահին է, երբ սույն Հրահանգի համաձայն դիմում է ներկայացվում:

## ԳԼՈՒԽ II

### ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

#### Հոդված 3

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը

1. Սույն Հրահանգով նախատեսված վեճի մեջ ընդգրկված ֆիզիկական անձինք պետք է իրավունք ունենան ստանալու պատշաճ անվճար իրավաբանական օգնություն, որպեսզի սույն Հրահանգի պայմանների համաձայն ապահովվի նրանց արդարադատության արդյունավետ մատչելիությունը:

2. Անվճար իրավաբանական օգնությունը համարվում է պատշաճ, երբ այն երաշխավորում է՝

ա) մինչդասական խորհրդատվության տրամադրում՝ նպատակ հետապնդելով հաշտության գալ մինչև դատավարական գործողություններ նախաձեռնելը.

բ) իրավաբանական օգնություն և ներկայացուցչություն դատարանում և իրավաբանական օգնություն ստացողի դատական ծախսերը հոգալու հետ կապված օժանդակություն կամ նման ծախսերից ազատում՝ ներառյալ 7-րդ հոդվածում նշված ծախսերը և դատարանի կողմից անձանց պարտադրված վճարները՝ դատավարության ընթացքում գործողություններ իրականացնելու համար:

Այն անդամ պետություններում, որտեղ պարտվող կողմը պատասխանատու է հակառակ կողմի ծախսերի համար, եթե անվճար իրավաբանական օգնություն ստացող անձը պարտվում է, իրավաբանական օգնությունը պետք է ծածկի այն ծախսերը, որոնք կրել է հակառակ կողմը այն դեպքում, եթե այն կծածկեր ծախսերը, եթե անվճար իրավաբանական օգնություն ստացողը մշտապես կամ առավելապես բնակվեր այն անդամ պետությունում, որտեղ գտնվում է դատարանը:

3. Անդամ պետությունները կարող են դատարանում կամ տրիբունալում չապահովել իրավաբանական օգնություն կամ ներկայացուցչություն այն վարույթներում, որոնք, մասնավորապես, նպատակ ունեն ապահովել վեճի կողմերի մասնակցությունը

գործին անձամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանները կամ մեկ այլ իրավասու մարմին այլ կերպ է որոշում, որպեսզի ապահովվի կողմերի հավասարությունը կամ հաշվի առնելով գործի բարդությունը:

4. Անդամ պետությունները կարող են պահանջել, որպեսզի անվճար իրավաբանական օգնություն ստացողները կատարեն համապատասխան վճարումներ դատական ծախսերի առումով՝ հաշվի առնելով 5-րդ հոդվածում նշված պայմանները:

5. Անդամ պետությունները կարող են սահմանել, որ իրավասու մարմինը կարող է որոշել, որ անվճար իրավաբանական օգնություն ստացողները պետք է հատուցեն այն ամբողջությամբ կամ մասամբ այն դեպքերում, եթե նրանց ֆինանսական դրությունն էականորեն բարելավվել է, կամ եթե իրավաբանական օգնություն տրամադրելու որոշումը հանվում է այն հիմքով, որ ոչ ճիշտ տեղեկություններ են տրամադրվել իրավաբանական օգնություն ստացող անձի կողմից:

#### Հոդված 4

##### Խտրականության բացառումը

Անդամ պետություններն առանց խտրականության պետք է անվճար իրավաբանական օգնություն տրամադրեն Միության և երրորդ երկրների այն քաղաքացիներին, որոնք օրինական են բնակվում անդամ պետությունում:

#### ԳԼՈՒԽ III

##### ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԸ

#### Հոդված 5

##### Ֆինանսական միջոցներին վերաբերող պայմանները

1. Անդամ պետությունները պետք է անվճար իրավաբանական օգնություն տրամադրեն հոդված 3(1)-ում նշված անձանց, ովքեր իրենց տնտեսական վիճակի հետևանքով մասամբ կամ ամբողջությամբ անկարող են հոգալ հոդված 3(2)-ում նշված դատական ծախսերը՝ նրանց արդարադատության արդյունավետ մատչելիությունն ապահովելու նպատակով:

2. Անձի տնտեսական վիճակը պետք է գնահատվի այն անդամ պետության իրավասու մարմնի կողմից, որտեղ գտնվում է դատարանը՝ հաշվի առնելով տարբեր օբյեկտիվ գործոններ, ինչպես օրինակ՝ եկամուտը, կապիտալը և ընտանեկան դրությունը, ներառյալ՝ այն անձանց միջոցների գնահատումը, որոնք ֆինանսապես կախված են դիմողից:



3. Անդամ պետությունները կարող են սահմանել շեմեր, որից բարձր գտնվող՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմողները, համարվում է, որ մասամբ կամ ամբողջությամբ ի վիճակի են հոգալու հոդված 3(2)–ում սահմանված դատական ծախսերը: Այդ շեմերը սահմանվում են սույն հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված չափորոշիչների հիման վրա:

4. Սույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն սահմանված շեմերը հնարավոր է, որ չխոչընդոտեն անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմողներին, որոնք գտնվում են այդ շեմերից բարձր, ստանալ անվճար իրավաբանական օգնություն, եթե նրանք ապացուցում են, որ իրենք ի վիճակի չեն վճարել հոդված 3(2)–ում նշված դատական ծախսերը՝ մշտապես կամ առավելապես բնակվելու և դատարանի գտնվելու վայրի անդամ պետությունների միջև կենսաապահովման տարբերության պատճառով:

5. Անհրաժեշտ չէ անվճար իրավաբանական օգնություն տրամադրել այն դիմողներին, որոնք դատարանում քննվող գործի ժամանակ օգտվում են արդյունավետ այլ մեխանիզմներից, որոնք ծածկում են հոդված 3(2)–ում նշված դատական ծախսերը

## Հոդված 6

### Վեճերի էությանը վերաբերող պայմանները

1. Անդամ պետությունները կարող են սահմանել, որ անվճար իրավաբանական օգնություն ստանալու այն դիմումները, որոնք ակնհայտորեն անհիմն են, կարող են մերժվել իրավասու մարմինների կողմից:

2. Եթե առաջարկվել է մինչդատավարական խորհրդատվություն, հետագա անվճար իրավաբանական օգնությունը կարող է մերժվել կամ չեղյալ համարվել գործի էության հետ կապված հիմքերով այնքանով, որքանով արդարադատության մատչելիությունն երաշխավորված է:

3. Դիմումի էության մասին որոշում ընդունելիս և չհակասելով 5-րդ հոդվածին՝ անդամ պետությունները պետք է դիտարկեն մասնավոր դեպքի կարևորությունը դիմողի համար, բայց կարող են նաև հաշվի առնել գործի բնույթը, երբ դիմողը իր հեղինակությանը հասցված վնասի պահանջ է ներկայացրել, բայց նյութական կամ ֆինանսական ոչ մի կորուստ չի կրել, կամ երբ դիմումը վերաբերում է մի պահանջի, որն ուղղակիորեն բխում է դիմողի մասնագիտական գործունեությունից կամ ինքնազբաղ մասնագիտությունից:

## Հոդված 7

Վեճի միջսահմանային բնույթին վերաբերող ծախսերը

Անվճար իրավաբանական օգնությունը, որը տրամադրվել է դատարանի գտնվելու վայրի անդամ պետությունում, պետք է ծածկի վեճի միջսահմանային բնույթին ուղղակիորեն վերաբերող հետևյալ ծախսերը՝

ա) բանավոր թարգմանությունը.

բ) դատարանի կամ իրավասու մարմնի կողմից պահանջվող և անվճար իրավաբանական օգնություն ստացող անձի կողմից ներկայացվող այն փաստաթղթերի թարգմանությունը, որոնք անհրաժեշտ են գործի լուծման համար, և

գ) ճանապարհածախսը, որը դիմողը պետք է կրի այն դեպքերում, երբ դատարանում դիմողի գործի ներկայացման հետ կապված անձանց ֆիզիկական ներկայությունը պահանջվում է այդ անդամ պետության իրավունքով կամ դատարանի կողմից, և երբ դատարանը որոշում է, որ շահագրգիռ անձինք այլ միջոցներով չեն կարող հանդես գալ դատարանում:

## Հոդված 8

Մշտապես կամ առավելապես բնակվելու անդամ պետության կողմից ծածկված ծախսերը

Անդամ պետությունը, որտեղ մշտապես կամ առավելապես բնակվում է անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմողը, պետք է տրամադրի անվճար իրավաբանական օգնություն, ինչպես նշված է հոդված 3(2)-ում, որն անհրաժեշտ է ծածկելու համար՝

ա) տեղական իրավաբանի կամ իրավաբանական խորհրդատվություն տալու իրավասություն ունեցող որևէ այլ անձի հետ կապված ծախսերը, որոնք առաջացել են այդ անդամ պետությունում՝ նախքան դատարանի գտնվելու վայրի անդամ պետությունում սույն Հրահանգին համապատասխան անվճար իրավաբանական օգնության դիմումն ստանալը:

բ) դիմումի և անհրաժեշտ օժանդակ փաստաթղթերի թարգմանության հետ կապված ծախսերը, երբ դիմումը ներկայացվում է իրավասու մարմիններին այդ անդամ պետությունում:

## Հոդված 9

### Անվճար իրավաբանական օգնության շարունակականությունը

1. Անվճար իրավաբանական օգնությունը պետք է շարունակվի տրամադրվել իրավաբանական օգնություն ստացողներին ամբողջությամբ կամ մասամբ՝ ծածկելու համար այն ծախսերը, որոնք առաջացել են դատարանի գտնվելու վայրի անդամ պետությունում որոշումը կատարելու համար:
2. Անվճար իրավաբանական օգնություն ստացողը, ով նման օգնություն է ստացել անդամ պետությունում, որտեղ գտնվում է դատարանը, պետք է ստանա անվճար իրավաբանական օգնություն այն անդամ պետության իրավունքով սահմանված կարգով, որտեղ ճանաչման և կատարման պահանջ է ներկայացվում:
3. Անվճար իրավաբանական օգնությունը պետք է շարունակվի մատչելի լինել, եթե բողոքը բերվում է կամ ստացող անձի կողմից կամ նրա դեմ՝ համաձայն 5-րդ և 6-րդ հոդվածների:
4. Անդամ պետությունները կարող են սահմանել դրույթ՝ հոդված 3(3)-ի և (5)-ի, 5-րդ և 6-րդ հոդվածներում սահմանված հիմքերով վարույթի ցանկացած փուլում դիմումը վերանայելու համար, ներառյալ՝ սույն հոդվածի 1-3-րդ պարբերություններում նշված վարույթները:

## Հոդված 10

### Արտադատական ընթացակարգերը

Անվճար իրավաբանական օգնության տրամադրումը պետք է տարածվի նաև արտադատական ընթացակարգերի վրա՝ սույն Հրահանգում սահմանված պայմանների համաձայն, եթե օրենքը կողմերից պահանջում է օգտվել դրանցից, կամ երբ դատարանն է պահանջում վեճի կողմերին դիմել դրանց:

## Հոդված 11

### Նույնական փաստաթղթերը

Անվճար իրավաբանական օգնություն պետք է տրամադրվի՝ սույն Հրահանգում սահմանված պայմանների համաձայն նույնական փաստաթղթերը այլ անդամ պետությունում կատարելու համար:

## ԳԼՈՒԽ IV

### ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

#### Հոդված 12

Անվճար իրավաբանական օգնություն տրամադրող մարմինը

Անվճար իրավաբանական օգնություն պետք է տրամադրվի կամ մերժվի այն անդամ պետության իրավասու մարմնի կողմից, որտեղ գտնվում է դատարանը՝ չխախտելով 8-րդ հոդվածը:

#### Հոդված 13

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումները ներկայացնելը և փոխանցելը

1. Անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումները կարող են ներկայացվել կամ

ա) այն անդամ պետության իրավասու մարմնին, որտեղ դիմողը մշտապես կամ առավելապես բնակվում է (փոխանցող մարմին), կամ

բ) անդամ պետության իրավասու մարմնին, որտեղ գտնվում է դատարանը, կամ որտեղ որոշումը պետք է կատարվի (ստացող մարմին):

2. Անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումները պետք է լրացվեն, իսկ օժանդակ փաստաթղթերը՝ թարգմանվեն հետևյալ լեզուներով՝

ա) իրավասու ստացող մարմնի անդամ պետության պաշտոնական լեզվով կամ լեզուներից մեկով, որը համապատասխանում է Համայնքի հաստատությունների լեզուներից որևէ մեկին, կամ

բ) մեկ այլ լեզվով, որը անդամ պետությունը նշել է, որ կարող է ընդունել հոդված 14(3)-ի համաձայն:

3. Իրավասու փոխանցող մարմինները կարող են որոշում կայացնել դիմումի փոխանցումը մերժելու մասին, եթե այն ակնհայտորեն՝

ա) անհիմն է կամ

բ) չի մտնում սույն Հրահանգի կարգավորման ոլորտի մեջ:

Հոդված 15 (2)-ում և (3)-ում նշված պայմանները կիրառվում են նման որոշումների նկատմամբ:

4. Իրավասու փոխանցող մարմինը պետք է օժանդակի դիմողին՝ ապահովելու, որ դիմումն ուղեկցվի իրավասու փոխանցող մարմնին հայտնի բոլոր օժանդակ փաստաթղթերով, որոնք պահանջվում են դիմումի քննությունն ապահովելու համար: Այն նաև պետք է օժանդակի դիմողին՝ տրամադրելու օժանդակ փաստաթղթերի ցանկացած անհրաժեշտ թարգմանություն՝ հոդված 8(բ)–ին համապատասխան:

Իրավասու փոխանցող մարմինը դիմումը պետք է փոխանցի այլ անդամ պետությունում իրավասու ստացող մարմնին 2-րդ պարբերությունում նշված լեզուներից որևէ մեկով պատշաճ կերպով լրացված դիմումը, ինչպես նաև այդ լեզուներից որևէ մեկով, անհրաժեշտության դեպքում, թարգմանված օժանդակ փաստաթղթերը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում:

5. Սույն Հրահանգի համաձայն փոխանցված փաստաթղթերը պետք է ազատվեն օրինականացումից կամ որևէ այլ համարժեք ձևականությունից:

6. Անդամ պետությունները չեն կարող գումար գանձել այն ծառայությունների համար, որոնք մատուցվել են 4-րդ պարբերությանը համապատասխան: Այն անդամ պետությունները, որտեղ մշտապես կամ առավելապես բնակվում է անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմողը, կարող են սահմանել, որ դիմողը պետք է հատուցի թարգմանության ծախսերը, որոնք կրել է իրավասու փոխանցող մարմինը այն դեպքում, եթե անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումը մերժվում է իրավասու մարմնի կողմից:

#### Հոդված 14

##### Իրավասու մարմինները և լեզուն

1. Անդամ պետությունները պետք է նշանակեն մարմին կամ մարմիններ, որը (որոնք) իրավասու է (իրավասու են) ուղարկել (փոխանցող մարմին) և ստանալ (ստացող մարմին) դիմումը:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է Հանձնաժողովին տրամադրի հետևյալ տեղեկությունները՝

– 1-ին պարբերությունում նշված իրավասու ստացող և փոխանցող մարմինների անվանումները և հասցեները.

– այն աշխարհագրական տարածքները, որտեղ նրանք իրավասություն ունեն.

– այն միջոցները, որոնցով մատչելի է լինում ստանալ դիմումները և

– այն լեզուները, որոնք կարող են օգտագործվել դիմումը լրացնելու համար:

3. Անդամ պետությունները պետք է տեղեկացնեն Հանձնաժողովին իրենց լեզվից բացի՝ Համայնքի հաստատությունների այլ պաշտոնական լեզվի կամ լեզուների մասին, որը կամ որոնք ընդունելի են իրավասու ստացող մարմնի համար ստացման

ենթակա՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների լրացման առումով՝ սույն Հրահանգին համապատասխան:

4. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին փոխանցեն 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված տեղեկությունները մինչև 2004 թվականի նոյեմբերի 30-ը: Հանձնաժողովը պետք է ծանուցվի նման տեղեկությունների որևէ էական փոփոխության մասին ոչ ուշ, քան տվյալ անդամ պետությունում փոփոխությունն ուժի մեջ մտնելուց երկու ամիս առաջ:

5. 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված տեղեկությունները պետք է հրապարակվեն Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում:

#### Հոդված 15<sup>Դիմումներին ընթացք տալը</sup>

1. Անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող ազգային մարմինները պետք է ապահովեն, որ դիմողը լիովին տեղեկացված լինի դիմումների ընթացքի մասին:

2. Այն դեպքերում, երբ դիմումը ամբողջությամբ կամ մասամբ մերժվում է, պետք է տրվեն մերժման հիմքերը:

3. Անդամ պետությունները պետք է դրույթ սահմանեն անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների մերժման որոշումների վերանայման կամ բողոքարկման համար: Անդամ պետությունները կարող են բացառել այն գործերը, երբ անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումը մերժվել է դատարանի կամ տրիբունալի կողմից, որոնց՝ գործի առարկայի վերաբերյալ որոշումների դեմ ազգային իրավունքով կամ վերաքննություն իրականացնող դատարանի որոշմամբ դատական պաշտպանության միջոց չկա:

4. Եթե անվճար իրավաբանական օգնությունը մերժող կամ չեղյալ հայտարարող որոշման դեմ բողոքները 6-րդ հոդվածի ուժով ունեն վարչական բնույթ, դրանք միշտ ի վերջո պետք է ենթակա լինեն դատական վերանայման:

#### Հոդված 16

##### Օրինակելի ձևը

1. Փոխանցումը հեշտացնելու նպատակով՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների և նման դիմումների փոխանցման օրինակելի ձևը պետք է հաստատվի հոդված 17(2)-ով սահմանված ընթացակարգին համապատասխան:

2. Անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների փոխանցման օրինակելի ձևը պետք է հաստատվի ամենուշը մինչև 2003 թվականի մայիսի 30-ը:

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների օրինակելի ձևը պետք է հաստատվի ամենաուշը մինչև 2004 թվականի նոյեմբերի 30-ը:

ԳԼՈՒԽ V

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 17

Կոմիտեն

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:
2. Այն դեպքերում, երբ հղում է կատարվում սույն պարբերությանը, պետք է կիրառվեն թիվ 1999/468/ԵՀ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները:
3. Կոմիտեն պետք է ընդունի իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 18

Տեղեկատվությունը

Իրավասու ազգային մարմինները պետք է համագործակցեն՝ հանրությանը և մասնագիտական շրջանակներին անվճար իրավաբանական օգնության տարբեր համակարգերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար՝ մասնավորապես թիվ 2001/470/ԵՀ որոշման համաձայն հաստատված Եվրոպական դատական ցանցի միջոցով:

Հոդված 19

Առավել բարենպաստ դրույթներ

Սույն Հրահանգը չպետք է խոչընդոտի, որ անդամ պետությունները ընդունեն դրույթ անվճար իրավաբանական օգնություն ստանալու առումով դիմողների և անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց համար առավել բարենպաստ պայմանների վերաբերյալ:

Հոդված 20

Առնչությունը այլ փաստաթղթերին

Այս Հրահանգը, ինչպես անդամ պետությունների միջև, այնպես էլ այն հարցերի հետ կապված, որոնց նկատմամբ այն կիրառվում է, պետք է գերակայի անդամ

պետությունների կողմից կնքված երկկողմ և բազմակողմ պայմանագրերի նկատմամբ, ներառյալ՝

ա) 2001 թվականին Մոսկվայում ստորագրված «Անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների փոխանցման մասին» եվրոպական համաձայնագրի լրացուցիչ արձանագրությամբ փոփոխված՝ 1977 թվականի հունվարի 27-ին Ստրասբուրգում ստորագրված «Անվճար իրավաբանական օգնություն ստանալու դիմումների փոխանցման մասին» եվրոպական համաձայնագիրը.

բ) 1980 թվականի հոկտեմբերի 25-ի «Միջազգային արդարադատության մատչելիության մասին» Հաագայի կոնվենցիան:

## Հոդված 21

Ազգային իրավունք փոխաստեղելը

1. Անդամ պետությունները պետք է գործողության մեջ դնեն սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը ոչ ուշ, քան 2004 թվականի նոյեմբերի 30-ը, բացառությամբ հոդված 3(2)(ա)-ի, որի դեպքում սույն Հրահանգի փոխաստեղումը ազգային իրավունք պետք է տեղի ունենա ոչ ուշ, քան 2006 թվականի մայիսի 30-ը: Նրանք անմիջապես պետք է տեղեկացնեն այդ մասին Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այս ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ պետք է ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները պետք է սահմանվեն անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է ներկայացնեն ազգային իրավունքի այն հիմնական դրույթների տեքստը, որոնք նրանք ընդունել են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

## Հոդված 22

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից:



Հոդված 23

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին՝ «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրին համապատասխան:

Կատարված է Բրյուսելում, 2003 թվականի հունվարի 27-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Գ. Պապանդրեու

(1) ՊՏ, C 103 E, 30.04.2002թ., էջ 368:

(2) 2002 թվականի սեպտեմբերի 25-ին ներկայացված եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել)

(3) ՊՏ, C 221, 17.09.2002թ., էջ 64:

(4) ՊՏ, L 174, 27.06.2001թ., էջ 1:

(5) ՊՏ, L 281, 14.03.1968թ., էջ 31:

(6) ՊՏ, L 24, 30.01.1998թ., էջ 1:

(7) ՊՏ, L 174, 27.06.2001թ., էջ 25:

(8) ՊՏ, L 184, 17.07.1999թ., էջ 23:

(9) ՊՏ, L 12, 16.01.2001թ., էջ 1: Թիվ 1496/2002 (ԵՀ) կանոնակարգով (ՊՏ, L 225, 22.08.2002թ., էջ 13) փոփոխված կանոնակարգ: